



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

19 դեկտեմբերի 2018 թվականի N 199-Ա

**Ք. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 163-րդ հոդվածների, 164-րդ հոդվածի 1-ին և 167-րդ հոդվածի 3-րդ մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 327-Ա որոշումը, ինչպես նաև *Ք. Սարգսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի Ռ. Գևորգյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն *Քրիստինե Սարգսյանին* տրամադրել 2017 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ հինգ աշխատանքային օրը, 2018 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 28-ը ներառյալ:

2. *Քրիստինե Սարգսյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Քասախի Ռ. Գևորգյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ *Հայարիի Տոնոյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի դեկտեմբերի 19  
ք. Հրազդան



Ռ. ԳԵՏՐՈՍՅԱՆ